

## ԱՇ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

## ՄԱՐՏԻՐՈՍ ԴԻ ԱՌԱՔԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբան.

16-18-րդ դարի միջև ընկած ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության համեմատաբար քիչ լուսարանված ժամանակաշրջաններից մեկն է։ Պատմական այս շրջանին վերաբերող քիչ ուսումնասիրություններ ունենք։ Այս բացը մասամբ պիտի բացատրել նրանով, որ քիչ են, ավելի ճիշտ՝ քիչ են հրատարակված այս ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուրները։ Մինչև այժմ մենք հրատարակի վրա ունենք փաստորեն այդ շրջանին վերաբերող հայկական պատմիչներից՝ Զաքարիա սարկավադ, Առաքել Դավթիսեցի, Պատմության Դավիթ բեկի, Աբրահամ Կրետացի, Զաքարիա Ազուլեցի, Աբրահամ Երևանցի և այլ մի քանի մանր պատմությունները։ Դեռ չեն հավաքված ու չեն հրատարակված այդ շրջանին վերաբերող հայկական ձեռագրերի պատմական հիշատակարանները և պատմական բովանդակություն ունեցող փոքրիկ ժամանակագրությունները։ Չեն հրատարակված նույնպես Մոսկվայի արխիվներում, հատկապես ГАРКЭ-ում (Государственный архив феодально-крепостнической эпохи) և դած հայկական ֆոնդի արժեքավոր փաստաթղթերը։ Իսկ այս փաստաթղթերը մեզ համար արժեքավոր են ոչ միայն այն տեսակետից, որ լրացնում և ամբողջացնում են պատմիչների տեղեկությունները, այլ և այն սրտնառով, որ նրանք վստահելի նյութեր են՝ դրված պատմական իրադարձությունների ազնաատես ժամանակակից անձնավորությունների կողմից։

Զհրատարակված ժամանակագրություն-

ների շարքին է պատկանում Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, ի որը գտնվում է ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1786 ձեռագրում։ Թեև ժամանակագրության վերնագրում և տեքստում չկա Մարտիրոսի անունը, սակայն մենք կարծում ենք, որ ժամանակագրությունը նրանք պիտի լինի, որովհետև նախ՝ ժամանակագրությունը պարունակող ձեռագրի գրիչը նա է և ապա՝ ժամանակագրության վերջին թվականը համընկնում է ձեռագրի գրչության ժամանակի հետ։ Դժվարանում ենք կասկածել, որ Մարտիրոս դի Առաքելը, որը գրել է ամբողջ ձեռագիրը, օգտված լինի նույն տարում կապած մի այլ հեղինակի ժամանակագրությունից։

Ժամանակագրությունը ընդհանուր վերնագիր չունի։ Տեքստի առաջին էջի վրա նշանակված է «Կարգ և թիւ թագաւորաց Պարսից» վերնագիրը, որը սակայն ամբողջ աշխատության վերնագիր չէ, այլ՝ առաջին գլխի։ Այս վերնագրի ներքո Մարտիրոսը տալիս է ոչ թե պարսիկ շահերի չորս ցամաք ժամանակագրությունը, այլ պատմական այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել այս կամ այն շահի օրով իրանում և Անդրկովկասում։ Մյուս գլուխներում ժամանակագիրը արժեքավոր տեղեկություններ է տալիս աղվանների արշավանքի և Պետրոս Մեծի Դերբենդ, Բազու և այլ քաղաքները վերցնելու մասին։ Շարադրված նյութերը սխառնատիպաչափ ենթարկելու նպատակով՝ ժամանակագիրը նրանց վերնագրերը տալիս է լուսանցքի վերին մասում («Առումն թագա-



ւորութեան Պարսից ի յԱղվանէն», «Առաւմտեան աշխարհաց Պարսից, Օսմանցոց և Ռուսաց», «Մարտ օսմանցոց ընդ Աղվանս և ընդ Պարսից»:

Մարտիրոս դի Առաքելի անձնավորութեան մասին, բժրախտարար, շատ քիչ տեղեկութիւններ ունենք: Գիտենք միայն, որ նա 18-րդ դարի առաջին քառորդի խոշոր առեւտրականներից է: Այսպէս՝ ձեռագրի թերթ 79-ը ստանալով հիշատակագրութիւնից երեւում է, որ նա առեւտրական նպատակով գնացել է Շիրազ և այնտեղ հանդիպել Մաթեւոս Զուղայեցուն:

«Ի Սպահան յորժամ ելեալ, Շիրազ քաղաք Պարսից հասեալ, Մաթեւոս իմ հանդիպեալ, որդի Յովհանու Զուղա լեալ,

Աստ, Շիրազ, իմ վասն այն նստեալ, ի Հնդկաց նաւն նկատեալ,

Բուս միտսին պանդոկի լեալ, որ Երկգրանի անուանեալ,

Տեառն թիւն ՌՃԹ լեալ, և մայրսի վեց-տասան լեալ,

Իսկ իմ տեսեալ սորա իղծ լեալ, և առ սուրբ գիրս սէր ունեցեալ,

Բոպէ աւուրն ոչ դադարեալ, սէրն հաւատոյ հարցաքննեալ,

Ուստի յորժամ դայս սէր տեսեալ, աղօթ մատոյց դայս նըւերեալ,

Աիրտվ անմոտաց գիս խնդրեալ, դաղօթս իւր յիշել աղաչեալ,

Ի վայելումն իւր ընծայեալ, ամէն եղիցի ասացեալ»:

(№ 1786, 70 ք)

Նույն ձեռագրում թողած իր մի այլ հիշատակարանից իմանում ենք, որ նա 1722 թվին հանապարհօրդել է դեպի Բանդարազի. «Թիֆլիս փրկչին 1722 և հայոց ՌՃՀԱ և Աղարիայի ՃԷ, նոյնիմբեր նոր առմարի ԻԳ և հինն՝ ԺԲ...», որ լուսինն էր ԺԷ լրացեալ, ի Զ ժամուն, որ ետ մտանելոյն արևուկէս ժամ էր անցեալ, աւուր Բ շաբաթու, ի յարեմուտս երեկցաւ տատղ մի հրագոյն սրակերպ, երկարութիւն սրաշափ մի, սակաւ տակաւ փոքրացաւ՝ մինչև ի քսան հայր մեր, ի ողջոյն Մարիամ առելոյ ժամն՝ աներևութացաւ: Այս տեսի ի մէջ ծովու, յորժամ ի Բանդարի սուրաթէն և Մուրայուց նաւէաք ի Բանդարազի. որ մերձ եղաք ի Բանդարազի

իրբե 33 միլ, որ և գրեցի ապիրատ Մարտիրոս դի Առաքել» (Ձեռագիր № 1786, 77 ք):

Այս նույն հիշատակարանի շարունակութիւնից իմանում ենք նաև, որ Մարտիրոսը 1723 թվին եղել է Լիվոնոսում:

«Պատմեմ ես ձեզ եղբարք իր իմն դարչելի մահմեդականացն: Յորժամ ի թիփս փրկչին 1723, անաղալ սեպտեմբերի Ս, հասանք նաւով ողորմութեամբ Քրիստոսի անվնաս ի քաղաքն Լիվոնա և մասք ի Սանջաթ նաղարէթն, օթեանեցաք ի միտսին առն միոյ, ասկաւ յունոյ, որոյ անուն էր Յովանի, որ էր գերեցեալ ի բարբարոս Տրապուլուսացն և մնացեալ ի գերութեան ամս Ժ: Պատմեաց մեզ թէ ի Տրապուլ և Թունուղ և Զղայիւր և ամենայն կողմն բարբարոսաց մահմետականքն, ամենայն խառնակ ինչ ուտեն՝ զշուն, զգայլ, շաղալ և աղուէս և ամենայն այսպիսի ինչ ուտեն. որ ասէր թէ՛ ես անդ գինի վաճառէի. մեկ մէյլխանաչի բազում անգամ հանդիպեցաւ և ասէր, որ այսպիսի դադրալի ինչ յորս առեալ և փուռն խորովեալ բերեալ են ի մեյլխանան և կերեալ: Ասէր ես՝ թէ մեծամեծքն յորժամ եփեն շունն, եօթանասուն ինչ խառնին հետն՝ մեկ դարաֆիլ, դարչին, ջովղ, հիլ, ֆլֆլ, տաքդեղ, դֆրան, աղ, սոխ, սխտոր, բրինձ, դարբի, ցորեն և այլ այսպիսիք մինչև 2 ինչ, զի ասեն թէ՛ դեղ է, կուտէր ես թէ՛ մին տղայ մինչ ի 70 շուն էր զողացել և կերել, վասն այս ի փողոցի և ի շուկայն ամենեկն շուն չի երևի, ամենայն տուն կու պահեն պահապանօք, զի մի գողացին. այսպիսի ինչ առաւմտայն այս դարչելիքս և ի բրիտոններից խորչին վասն խողենոյ» (№ 1786, թ. 77 ք):

Ահա այն ամենն, ինչ հայտնի է մեզ Մարտիրոս դի Առաքելի անձնավորութեան մասին:

Մարտիրոսի ժամանակագրութիւնը պարունակող ձեռագիրը գրված է 1722-23 թվերին: Իր բովանդակութեամբ նա պատմական նյութերի ժողովածու է: Գրված է զանազան վայրերում, միասյուն, նոսր գրով:

Մարտիրոս դի Առաքելի տարերգութեան լեզուն հակիրճ է: Ձկան ավելորդ արանութիւններ: Նկարագրած փաստերի մեծ



մասին նա ծանոթ է մոտիկից, ի տարբերություն միջնադարյան կրոնական մյուս ժամանակագիրներից՝ նա խույս է տալիս եկեղեցական պատմությունը տարերգության առանցք դարձնելուց: Մարտիրոսն իր ժամանակի գիտուն անձնավորություն-

ներից է: Իմացել է նաև ֆրանսերեն ու վրացերեն:

Մարտիրոսի տարերգության տեքստը տալիս ենք զրեթե առանց փոփոխության՝ կատարելով շատ քիչ կետագրության ուղղումներ:

## ԿԱՐԳ ԵՎ ԹԻՒ ԹԱԳԱՎՈՐԱՑ ՊԱՐՍԻՑ<sup>1)</sup>

Ի թուարեութեանս հայոց ՊԽԶ [1397 թ.] յորժամ Լանկթամուրն ել երկրէ իւրմէ և եկն երկիրս Ատրպատականի՝ զՎան, զԵրևան և զՆախշուան աւերեաց՝ էր տէր Արտաշիւոյ շէխ ոմն՝ անուն Սէֆի: Սորա որդի լեալ շէխ Հայդար անուն, որ առեալ է իւր կնութիւն զքոյր Յեաղուր թագաւորին, որ էր տէր Թաւրեղոյ: Եւ էր սալ, այս Յեաղուրս, թոռն Չհանշահ թագաւորին: Եւ այս շէխ Հայդարէս և Եաղուր թագաւորին քանէն ծնանի որդի և անուանի Իսմայէլ: Այս շէխ Հայդարս և կինն իւր խորհին զեղով սպանանել զՅեաղուր թագաւորն՝ զի ինքեանք առցին զթագաւորութիւնն: Եւ սիրոյ պատճառօք կոչն զՅեաղուր թագաւորն ի հաշ և տան ուտել նմա զգեղեալ կերակուրն: Եւ յիս զգաւ լոյսն՝ թէ գեղեալ է կերակուրն և տայ նոցա ևս բռնութեամբ ուտել: Եւ մեռան երեքեան՝ Յեաղուր թագաւորն, շէխ Հէյդարն և կինն սորալ: Եւ մանուկն Իսմայէլ փախտական տարան յԱխթամար կղզի և անդ սնանի: Եւ յորժամ հասանէ յարբուսնս հասակի՝ բերեն զնա աղղականքն իւր և ասեն թէ՝ սալ է ժառանգն երկոցունց կողմանցն, քանզի սա է ժառանգն:

1. Ծահ Իսմայէլս նստի թագաւոր Թարվէղ ի թուին հայոց ԶԾ [1501 թ.]: Գնաց յԱսպահան, պատերազմեցաւ ընդ Ալվանդին և փախոյց զնա: Եւ ինքն էառ զթախտն և նստաւ: Եւ ի թվին ԶՀԵ [1526 թ.] մեռաւ, որ թագաւորեալ ամս ԻԵ [25]:

2. Ծահ Թահմազ, որդի շահ Իսմայէլին նըստաւ թախտ թվ. ԶՀԵ [1526 թ.] և թվ. ԶՂԾ<sup>2)</sup> [1541 թ.] զնաց էառ Երեւան, Գանջա, Ծամախի: Գնաց ևս ի Վրաց տուն և բազում աւերութիւն արար: Իարձեալ ի սոյն թվ. թագաւորն Հնդկաց Հումայուն նեղացեալ ի թշնամեաց, եկն առ շահն և առեալ ի սմա-

նէ զօրս իւրի ԻԲ [20000] և տարեալ յաշխարհն իւր պատերազմեցաւ և կոտորեաց զթշնամիսն իւր: Եւ փախոյց: Եւ գերկիրն իւր գրաւեաց: Եւ այլ բազում քաջութիւն արար շահ Թահմազս: Որ զնաց մինչ ի Վան, Երզնկան, և զԱրզրում աւերութիւն դարձոյց: Մեռաւ թվ. ՌՕԻԲ [1573 թ.]՝ թագաւորեալ սորալ ամս ԽԸ [48]. և այլք ասեն թէ՝ ԾԱ [51]:

[45ա] 3. Ծահ Իսմայէլ նստալ թախտ թվ. ՌԻԳ [1574 թ.], որ թագաւորեալ սորալ ամս Բ[2] և մեռաւ ի թվ. ՌՕԻԴ-ին [1575 թ.]: Եւ (դարձեալ ի սոյն թվիս, ասեն թէ՝ եղբայր սորալ, Թահմազ անուն թախտ նստուցին և յետոյ ի մէջ բաղանեացն խեղդեցին այս շահ Թահմազիս: Եւ յետ սորալ եղբայր սորալ՝ սուլթան Հայդարն սպանին: Եւ ապա զնացեալ մեծամեծքն զսպախկ շահ Իսմայէլն բերդէն դուրս բերին, թախտ նստուցին: Որ և յետոյ սպանին: Եւ սալ ևս էր եղբայր սոցալ: Որ և յետոյ Ամիրհամզա միրզէն ևս, եղբայր սոցալ, սպանին: Որ այս ամենայն եղև երկու ամուսն<sup>3)</sup>):

4. Ծահ Թուգայրանդա, որ էր որդի շահ Թամազին և եղբայր շահ Իսմայէլին այլ և եղբայր այս չորեցունս, նստաւ թախտ թվ. ՌՕԻԷ [1578 թ.]: Եւ էր սալ շէխ, և պալատեալ ի լուսոյ: Որ էր կարգեալ ի հօրէն իշխան յերկիրն Թորասանայ: Այլ էր սալ յոյժ անարի և վատթար ի դործս թագաւորութեան: Ի սորալ ժամանակս առին օսմանցիք՝ զԹալրիզ, զԵրևան, Գանջայ, Ծամախի: Եւ այլք ասեն թէ՝ վերոյ ասացեալ Ամիր Համզէն սորա որդի էր, որ սպանին կարմրազուխքն տիրաւեաց Ղզըլբաշքն:

<sup>2)</sup> Հայկական թվերն ճեա միտակն դարձ է ամսում գերան:

<sup>3)</sup> Փակագիծը դրված է հեղինակի կողմից, ըստ երևութիւն, այդ համաձայն որպէս անցնողուր հասկած դուրս հանելու նպատակով:

<sup>1)</sup> Գլուխների վերնագրերը դրված են էջերի վերնում:



որ խնայն թախծեալ որտիւ եկեալ առ միւս որդին իւր Աբազն, որ կարգեալ էր զնայ իշխան երկիրն Սօրաւորեալ: Եւ կացեալ ամս ինչ, մեռաւ՝ թաղաւորեալ ամս Գ [3] անարիս այս:

5. Շահ Աբազ, որդի շահ Սուլթան-զալին թախտ նստաւ ի Մաշադ թվ. ՌՕԻԹ. [1580]: Սալ յոյժ խոհեմ ի գործս թագաւորեան և յաղթող ի պատերազմի: Էառ ի ձեռաց Օսմանցոց՝ զթաւրիզ, զերեան, զԳանջալ, Շամախի և հասեալ ի Վան: [45p] Եւ զԲասեն աւերեաց: Եւ անտի զամենայն ազգս Հայոց քշեաց՝ սկսեալ անտի մինչ Երևան: Եւ անտի բերեալ առ Երասխ գետոյն, որ էր թվ. ՌՕԴ [1605թ.], մուտ տարոյն Ընդ նմին և զիւղաքաղաքն Ջուղայ քշեաց և տարաւ յԱսպահան բանակեցոյց և ի գաւառս նորայ սրբուհաց: Այս է մեծ սուրդունն: Որ և յետ Բ[2] ամի եղև սով սաստիկ մինչև Գ[3] ամ, այնպէս որ, մարդիկ զմեռեալս և զկենդանիս սպանանեալ ուտէին, որ է սարսելի ի լսելն: Եւ թվ. ՌԿՕԲ [1613թ.] զնաց ի Վրաց տուն և զբազումս զերեցոյց և բերեալ ի Պարսկաստան բնակեցոյց: Եւ թվ. ՌՀԱ. [1622] զնաց ի Ղանդահար և էառ պատերազմաւ զԵրզն: Եւ զՀարաթ էառ ևս: Ի սոյն թվ. զնաց Իմամղուլի խանն էառ զՀուրմուզ: Եւ այլ բազում արիութիւն արարեալ, բայց յոյժ նեղեաց զազգս հայոց և երկիրս հայոց ցիր և ցան արար: Եւ անբնակ արար Հայաստան: Եւ ոչքնչացոյց զերկիրն, որ մեռաւ ի թվ. ՌՕՀԸ, [1629թ.] թաղաւորեալ ամս ԽԹ [49]:

6) Շահ Սէֆի, թոռն Շահաբազին, նստաւ թախտ թվ. ՌՕՀԸ [1629թ.]: Ի սորայ աւուրս և ի սոյն թւին Մովսէս կաթողիկոս նստաւ յաթոռ Էջմիածին: Եւ զնաց առ շահն և Զ հարիւր [600]<sup>1)</sup> թու ման մուղաղայն Էջմիածնայ վերացոյց: Որ յետ Գ[3] ամնաց տէր Փլիսդոս կաթողիկոս նստաւ: Եւ զնաց առ շահն, ինդրեաց յաջն սուրբ Լուսավորչին: Եւ երեք Էջմիածին: Եւ սուլթան Մուրադն թվ. ՌՕՁԷ [1638թ.] զնաց Բաղդատ էառ: Եւ զԵրևանն ետուն շահին: Եւ այնմեմեկ եղև հաշտութիւն ի մէջ երկոցունցս: Մեռեալ թվին ՌՕՂԱ. [1642] թաղաւորեալ ամս ԺԳ [13]:

7. Շահ Աբազ երկրորդն որդի շահ Սէֆուն նըստաւ թվ. ՌՕՂԱ. [1642թ.], մայիսի ԻԶ [26]: Սալ առի թէ քրիստոնէայսէր էր: Եւ ի տիս մանկութեան նստաւ: Եւ ասեն թէ էր յոյժ ուղղադատ: [46 ա] Եւ ի թվ. ՌՕՂԷ [1648թ.] զնաց ի Ղանդահար և էառ զնայ պատերազմաւ ի ձեռաց Հնդկաց: Եւ կոտորեաց զամենայն զօրականսն, որ ի բերդին էին: Եւ ի թվ. ՌՃԱ. [1652թ.] կոտորեաց շահ Իջնան թաղաւորն Հրնդկաց առաքեաց որդի իւր շահաւատայ Օվրանդիւրն ԷձՌ [700,000] մարդով և Ասդուլա խանն Սարգար կարգեաց ի վերայ Ղանդահարայ, որք եկեալք ասպատակեցին զԵրզն և Բ[2] կէս ամիս նստան: ԻՌ [20,000] մարդ սփանի ջարդեցան, թող զօրդի բաղարի մարդն և բեռնակիրսն: Ապալ յետ դարձան զնացին: Եւ դարձեալ ի թվ. ՌՃԲ [1653թ.] միւս անգամ շահ Իջնանն առաքեաց մեծ զօրդին իւր Դարաշուքուն այլ ևս ԵձՌ [500,000] մարդով, որք եկեալք Գ[3] ամիս նստան շուրջ զՂանդահարով: ԼՌ [30,000] մարդ ջարդեցաւ սփանի, թող զօրդի բաղարի և բեռնակիր և զայլ ծառայս: Եւ ոչ կարացին առնուլ, դարձան յետս երկիրն իւրեանց ի Հրնդստան: Եւ այլ բազում արիութիւնս ցուցեալ այս երկրորդ Շահաբազս, մեռաւ ի թվ. ՌՃԺԵ [1666]՝ թաղաւորեալ ամս ԻԴ [24]:

8) Շահ Սուլէյման, որդի շահ Աբազ երկրորդին, յառաջ քան զայս ասեն թէ, յետ մեռնելոյն Շահաբազ երկրորդին, ասեն թէ՝ էր եղբայր այս Սուլէյմանիս Սէֆի աւուամբ՝ Գ[3] ամիս թաղաւորեաց, բայց երկբայութիւն երկի, զճշմարիտն ոչ երկի, այլ սալ ասեն թէ յառաջն անունն Սէֆի էր, որ միշտ հիւանդանայր, վասն այս պատճառի անունն փոխեալ Սուլէյման: Բայց այլք ասեն թէ՝ յառաջին անուն Իսմայէլ էր և յետոյ Սուլէյման փոխեցին: Արդ՝ եթէ այսպէս և եթէ այնպէս, այս Սուլէյմանս թաղաւորեաց յետ հօրն իւրոյ երկրորդ Շահաբազի և թախտ նստաւ ի թվ. ՌՃԺԵ [1666թ.]: Ի սորա աւուրս խաղաղութիւն էր Պարսս, որ ոչ դոյր պատերազմ

<sup>1</sup> Կարելի է և կարգաւ զըզհարիւր՝ ձեռով:



ոչ ի օսմանցոց կողմանէ և ոչ ալ կուսէ, ալ խաղաղութեամբ կայր: Մեռաւ ի թվ. ՌՃԽԳ-ին [1694թ.], որ թագաւորեալ ամս իջ [28]:

[46 ր] Զ) Շահ Սուլթան Հուսէյն, որդի շահ Սուլթանին, նրա աւ թախթ թվ. ՌՃԽԳ [1694 թ.] յուլիս ինչ [27] յաւուր ուրբաթի և Ազարիայի թվ. ՀԹ [79], Ղամար Թ [9] ի յԱսպանան, որ և թագաւորեալ ամս իջ [28], ամիսս Գ[3], աւուրս Ե [5]<sup>1)</sup>: Ի սորա աւուրս՝ բազում պատերազմունք ի Սորասան՝ մինչ զի ազգքն, որ կոչին բլուշ և աղվան, եկեալք աւերելն ի քաղաքն Քրման և Քաշան և ալ բազում տեղիս, որ աւար առնելով մինչ ի Սպանան և գային: Մինչ ի (20) օր անձոր մնացեալ կոչին թագաւորն Վրաց, որոյ անունն էր Գորգին խան, որ սալ գրնաց Քրման ի թվ. ՌՃԽԵ [1696 թ.] և պատերազմեցաւ ընդ բլուշին: Եւ կոտորեալ ի սուր սուսերի զամենեկան և զմնացեալսն փախտաւանս արար: Եւ նստաւ անդ մինչև ցԼ [8] ամս: Եւ յետ այնորիկ առաքեցին զնալ ի Ղանդահար և բազում արիութիւն և քաջութիւն արարեալ, անխնահ կոտորէր զամենայն բլուշ և զաղվանս: Եւ կեցեալ անդ ամս Գ[4]: Եւ յետոյ զոմն, Միրզէյիզ անուամբ, ազգաւ Աղվան, որ էր իւզբաշի յառէջ և յետոյ սուլթան եղև ի կողմանէ պարսից: Սալ յարուցեալ ի միում գիշերի զաղտ իւրով մարդկանօք արամբք, որ մերձ Գորգին խանին բնակեալ էր չորս հազար արամբք, իբր բարեկամ և ցաւակից ցուցանէր զինքն, ի մեջ գիշերի (թվ. Հայոց ՌՃԿԸ [1719 թ.], ապրիլ ամսոյ,<sup>2)</sup> էսպան գորգին խանն և բերդն Ղանդահարայ էառ զինքն և գրաւեաց, քանզի զօրքն Գորգին խանին ելեալք էին և պատերազմէին ընդ բլուշին և ոչ էին անդ Ղանդահար: Եւ յետ սորայ Բ[2] անգամ պարսից զօրք առաքեցին ի Ղանդահար, ամենեքեան կոտորեալք յետս դարձան: Եւ յետոյ եկեալք ալլաղ աղուանք առին զքաղաքն Հէրաթ և աւարի հարին զամենայն երկիրն Սորասանայ, որոյ նեղեալ

<sup>1)</sup> Փակագծի մեջ առած նախադասութիւնը գրված է ձեռագրի լուսանկարում ալ թանաքով:

<sup>2)</sup> Գրված է լուսանկարում ալ թանաքով:

թագաւորն պա(ր)սից գնաց ի քաղաքն Ղաղբին և Թէհրան նստաւ մինչի Գ[2] ամս<sup>3)</sup>: Թեքեա խորհիլ մարթացի ինչ վամն Հէրաթայ կամ Ղանդահարայ, և ոչ կարաց: Որ յետ Գ[3] ամաց դարձաւ ի յԱսպանան թվ. ՌՃՀՂ [1721 թ.] մայիսի 11 Ս, թվ. Ազարիայի ձգ, շաբաթ Բ, եկն յԱսպանան (թվ. ՌՃՀԹ (=1721) մայիս Ա, թվ. Ազարիայի ձԶ շաբաթ Բ եկն յԱսպանան)<sup>4)</sup> և նստեալ վարանեալ խորհի և ոչ ձեռնահաս լինի իրողութեանս՝ ի սոյն թվ. ՌՃՀԹ, [1721 թ.] յորժամ շահն էր Թէհրան քաղաքի բնակեալ զօրօքն, սորա էնթիմաղօվէն, որ է վաղիրն, որ էր անունն Յաթայալի խան, ազգաւ լազգի, Շամխալի տոհմէ, ապստամբեալ զաղտնի խորհէր սպանանիլ զշահն: Որմէ իմացեալ շահին զնկնգութիւնն նորա, իսկոյն Բ[2] աչացն խաւարեցոյց և զամենայն ինչս նորա և զանունն գրաւեաց: Եւ արդ այժմ, յորժամ է թվականս մեր ՌՃՀԹ, 1721 թ.] ապրիլ ԺԵ[15] և թվ. Ազարիայի ձԶ[106] զամս իԶ [26], օրն շաբաթ, որ է նոր կիրակէի շաբաթ աւրն, շաբթ եղև Թաւրիզ, մինչև ի Լ[30] Ժամն տյնալէս անագին երեքեալ և տատանեալ, մինչ ի ՃԽԽ[140,000] մարդ մեռեալ: Եւ բազում տեղ երկիր պատանեալ և բազում տունս մարդկամբք պլեալ, որ է սարսիլի յիշելն: Դարձեալ ի սոյն թվին և օգոստոսի ամսոյն կովկաս լեռնային բնակեալ լազգիքն եկեալք առին զքաղաքն Շամախի և ամենայն պարսիկքն սուր սուսերի մաշեցին: Եւ ամենայն մերձակայ գաւառս՝ եթէ Շաքի, Շիրվան և Ղաբալա աւարի առեալ, քանդեալ քայքայեցին, որ է այժմ այսպէս:

Առումն քաղաւորութեան պարսից ի յաղվանէն<sup>5)</sup>: Ի սոյն թվ. 1170 [1721թ.] և որդի

<sup>3)</sup> «Գ»-ի առջևից ինչ որ տառ գրված և չնշված է:

<sup>4)</sup> Փակագծի նախադասութիւնն ալ թանաքով գրված է լուսանկարում:

<sup>5)</sup> «Ի սոյն թվ. ՌՃՀԹ-ից կրճ. մինչև ընդ արդ...»

<sup>6)</sup> Ձեռագրի հետեւալ երեսի վերեւից գրված է «Առումն թագաւորութեան պարսից յաղվանէն»: Այնքան, որքան աղվանների արշավանքի պատմութիւնը սկսվում է այստեղից, ուստի և մենք նպատակահարմար համարեցինք այդ վերնագիրը զնիլ այստեղ, առնելով նա փակագրածի մեջ:

<sup>7)</sup> Մի բառ Ռաւցել է չգրված:



նոյն Ազգան Միրվէղին, որոյ անունն էր Միր Մանուկ, որ պրաւեալ նստէր Ղանդահար, եկն բազում զօրօք երկիրն Քրմանայ և էառ զքաղաքն պատերազմաւ: Եւ նստաւ անդ աւուրս 100[40]: Եւ աւարի առեալ զքաղաքն ամենայն բնակչօք իւրով և գեղօրէիք, սուր սուսերի մաշեաց: Եւ զմնացեալսն աւար արարեալ, գերեալ զամենայն ուստերս և զստերս խաղաղոյց տարաւ երկիրն Ղանդահարայ՝ անդ բնակեցոյց զամենայն գերեալսն: Իսկ ի յետակայ ամին, որ էր թվ. հայոց ՌՃՀԱ, [1722 թ.] յունվար ամսոյ, ել աստուծասաստ բարկութիւնն ի վերայ պարսից, որ սքանչելաբար պատահանեցան ամենայն բնակիչք Պարսկաստանայ՝ հանդերձ այն թագաւորաւն իւրեանց: Քանզի ել ի Ղանդահարայ Միր Մանուկն այն, որ էր որդի այն Միրվէղի՝ զին ժԲՌ [120,000] ազգան հեծելօք եկն ի վերայ Իսպահանայ: Եւ մին(չ)դեռ եհաս մերձ Իսպահանայ, Գուլիարաթ կոչեցալ տեղին, որ է Բ[2] կամ Գ[3] ասպարէզ<sup>1)</sup>, աղաջ մինչ Իսպահան: Ային Իսպահանայ զօրքն պարսից շահ Սուլթան Հուսէյնին իբր շՌ [70,000] արամբք հեծելովք ճակատեցան մինչ ի կէս ժամս: Որ և յաղթեալ Միր Մանուկն զօրացն պարսից անխնտե կոտորեաց: Եւ մնացեալ զօրքն պարսից փախեան քաղաքն Իսպահան: Եւ յետ երկու տուրց եկեալ Միր Մանուկն ժԲՌ [12,000] ազգան զօրքն իւրովք մերձ ի Զուղայ թաղի Փահարաղ կոչեցեալ աշղին: Եւ անդ նստաւ: Եւ պատեալ պաշարեաց զքաղաքն: Իսկ հայք, որք կային ի Զուղայ, կէսն փախեան յԱսպահան, և կէսն մնաց անդ Զուղայ, որ և եկեալ աղվանքն Զուղայ, չարչարելով և հարկանելով օր ըստ օրէ առին զամենայն ինչս և բոտացուածս հայոց: Որ և գերեցին բազում աղջկունս հայոց անդ: Յորժամ եկն Միր Մանուկ և պաշարեաց քաղաքն՝ էր թվ. ՌՃՀԱ [1722], մարտ Ա: Եւ նստաւ ամիսս Է[7]: Եւ եղև սով մեծ քաղաքին, որ ի վճարել կերակրոց կերին ձի, էշ, և այլ այսպիսիս անսուրբ կենդանեաց: Որ և յիշեն և գրին է բան սարսափելի,

քանզի կերան և զխաղունս մեռելոց մինչ ի ասի թէ՛ բազում մայրք զօրդի իւրեանց սպանին և կերան ի սովու: Իսկ յետ Է[7] ամսոց, անճարակ եղեալ շահն Սուլթան Հուսէյն, ել ի պալատէն իւրմէ Գ[3] ձիաւորօք և զնաց առ ռաւ Միր Մանուկին և ասաց. «Որովհետեւ աստուծոյ կամքն այսպեւ է, եկ նիստ ի թախտ, եթէ կամիս կուսովարել զու»: Եւ եղ ի գլուխն Մանուկին զջղայն իւր: Եւ միւս աւուրն ել անտի Միր Մանուկն և եկեալ հմուտ ի Սպահան քաղաք, զնաց ի պալատն արքունի և նստաւ թախտ: Եւ շահ Սուլթան Հուսէյնն եղ ի կալանս: Եւ ետ Գ[3] ամսոյ կոտորեալ զամենայն շահագղէքն և զամենայն նախարարս պարսից և բազումս ի մեծամեծաց և ժօրայից՝ մինչ որ ասի թէ, եթէ ի սովոյ որ բազումք և թէ ի օրոյ վեց ճՌ(վեց հարիւր հազար) անձինք մեռան ի Սպահան: Իսկ յորժամ պաշարեալ էր քաղաքն Իսպահան Միր Մանուկն, որդի շահիս, որ էր Փահմազ շահագղէն, փախստեամբ զնաց Ղազվին, նստաւ անդ քանի ամիսս, որ և հասին զօրքն աղվանից և անտի ևս փախստեամբ եհաս ի Թաւրէզ<sup>2)</sup>: Եւ Օքա ետ անուամբ թագաւորութիւնն իւրոյ Մանուկն: Եւ էառ շուրջանակի քաղաքսն մինչ ի Քաշան և Շիրազ: Եւ եղև թագաւոր՝ անուամբն՝ հոկտեմբեր ժԲ [12] թվ. ՌՃՀԱ [1722 թ.], յորժամ էառ Իսպահան քաղաքն և նստաւ:

Առումն ածխառնն Պարսից, օսմանցս և ուստաց<sup>3)</sup>: Ի սոյն ամի ելին օսմանցիք բազում պատրաստութեամբ ամենայն կողմամբ պարսիկ երկրաւթայց այսմ ամի ուսն և եկեալ զօրօք և էառ երկիրն Լազղու գծարխու և Անդրիու բերդն: Եւ անտի մեծ կոտորումն եղև երկուց՝ կողմանցն: Եւ անտի եկեալ զօրքն ռուսաց՝ ի վերայ բերդին Դարբանդու գունն արկաթի, որում կային պարսիկք: Եւ կամաւ ետուն զբերդն և զքաղաքն: Այլ և առին բնաքու և մերձակա(յ) գաւառս: Եւ ի սոյն ամի ելեան [48 ա] զօրքն ուստաց և խաղաղութեամբ մտին եր-

<sup>1)</sup> Դրված է «Ա. աղաջ» և ջնջված:

<sup>2)</sup> «Իսկ յորժամ պաշարեալ էր» բառերից մինչև այստեղ զրգած է լուսանցքում:

<sup>3)</sup> Վերնագիրը զրգած է 48ա երեսի վերևում, մենք բերում ենք համավանքի սկիզբը:



կերն Գիւրնայ՝ զՄաշա, Լահիջան, Գասկար  
և այլ ամենայն քաղաքս Գիւրնայ, զի Ի-  
նիուղովու մինչ ի Աստրաբադ և այլ քա-  
ղաքս Մաղանդարանու և ամենայն մերձա-  
կայ քաղաքս Կասքից ծովու կամաւ ետուն:  
Եւ մարն ուսքն և նստան և տիրեցին  
խաղաղութեամբ: Իսկ հետեյալ ամին, որ էր  
թվ. ՌՃՀԲ [1723 թ.], Վախտանգն, որ էր  
եղբոր որդի Գորգին խանին, անցելուով  
յիշեցեալն և տէրն Թիֆլիզոյ և Վրաց աշ-  
խարհին, պատրաստութիւն առնէր զօրաց  
պահպանութիւն երկրին իւրոյ՝ վասն զո-  
րացն օսմանցոց, որք բանակեալ էին ի  
Ղարս: Ի սոյն աւուրս Մահմուդ Ղուլի խան  
ոմն, որ էր բիճ որդի Թամրազ խանի,  
թոռն Հերակլին, Կախեթոյ Վրացսանն. սա  
ի կողմանէ շահպադայ Թահմազին ել զօրք  
Երևանայ և շրջակայ քաղաքացն, այլ և  
նոյն Կախեթու վրացօքն ի վերայ Վախ-  
տանգին պատերազմէր: Եւ յոչ զըտանել  
յաջողութիւնս, ել և գնաց առ լեռնաբնակ  
լազգիսն և ետ նոցա բազում սոճիկս, առեալ  
ընդ իւր զօրս նոցա և յանկարծօրէն հնա-  
բան(ա)կն Վախտանգին և փախստա-  
կան արար և եմուտ ի քաղաքն Թիֆլիզ՝  
աւար առնելով, ետ զամենայն ինչս նոցա  
լազգիացն: Եւ տիրեալ նստաւ Իսկոյն լու-  
եալ զօրացն օսմանցոց, որ ի Ղարս նստէին,  
Ե[5] փաշայ ելեալ դէպի Թիֆլիզ: Եւ Մահ-  
մեդ զուլի խանն առեալ զբանալիսն բեր-  
դին, ել ընդ առաջ, ետ օսմանցոց: Եւ եկեալ  
օսմանցոցն նըստան ի բերդին և տիրեցին  
զքաղաքն: Ի սոյն թուին ել Հասան փաշայն  
Բաղդադու զօրք բազմօք և գնաց էառ  
Քրմանշահ, որ և անդ վախճանեցաւ մա-  
հուամբ: Իսկ հետեյալ ամին, որ էր թվ.  
ՌՃՀԳ [1724 թ.], որդի Հասան փաշայիս,  
Ահմեդ փաշայ, սարսափէր, այլ Ե[5] Փա-  
շայօք, ել և գնաց բազում զօրք ի վերայ  
Համադանու և սլաշարեաց զքաղաքն իբրեւ  
ամիսս: Քանզի ժողովեալ էին ի մեջ քա-  
ղաքին իբրեւ Ռ[1000] գիւղից և զաւառաց  
անհամար անձինս: Եւ սասաիկ պատերազ-  
մաւ էառ զքաղաքն յամսեանն օգոստոսի:  
[48 ք] Եւ սրոյ ճարակ տուեալ անձինս իբ-  
րեւ երեք ճՌ [300,000]: Եւ գերեցան  
ամենայն գաւառօքն տղայս և աղջիկունս և

կանայս իբրեւ երկու ճՌ [200,000]: Ասին և  
ամենայն շուրջանակի քաղաքս ամենայն  
զավառօք մինչ ի Հաւիդայ և միւս կողմն  
մինչ ի Զանդան և Սուլթանիայ և մինչև ի  
Իսպահան՝ իբրեւ Դ[4] աւուր հանապարհ:  
Բայց աւանդ աղէտալի դրչիս և արեան ար-  
տասուախառն մելանիս, քանզի որ Համա-  
դան բնակեալք էին, երեք հարիւր տուն  
հայք: Թնդ դեղորեկցն շուրջանակի, այն-  
պէս կոտորեցան և դերեցան, մինչ ի հազիւ  
թէ Լ(30) տուն գտանի այժմ: Որ երեք ճ  
(300) անձինք ի մէջ եկեղեցոյն էին կօտո-  
րեալ: Արդ՝ ի սոյն թվ. ևս զօրքն օսմանցոց  
եկին ի վերայ Երևանայ: Եւ պատերազմե-  
ցին յոյժ սաստիկ, ապա կամաւ ետուն  
զբերդն: Եւ մինչդեռ գային զօրքն պարսից  
ի վերայ Երևանայ, մարն զօրքն օսմանցոց  
ի շրջակա(յ) զավառս նորա և ողորմելի  
աղէս հայոց բազումս կոտորելով, գերեցին  
բազում անձինս յոյժ: Ասին և Նախչիւան  
ամենայն Գողթնայ տամբ և Նօրս, Մարա-  
ղայ մինչ ի Գանձայ՝ ամենայն գաւառօք:  
Եւ անհարակ ազգս Հայոց Մեծաց՝ եթէ ի  
Շամխու և Շրվանայ երկիրն, եթէ Գանձայ  
և գաւառսն մինչ ի Թիֆլիզ և Երևանայ մինչ  
ի Արդաւէլ և Թարվիզ և Նօրս, Մարաղայ,  
որ եթէ ի լազգիացն, եթէ ապստամբ և ե-  
թէ այս օսմանցոց այնպէս աապալեցան,  
մինչ զի մեծ մասն հայոց սրոյ ճարակ եղէն  
և գերեցան, որպէս այժմ տեսանեմք: Ի  
սոյն թվ. Արդուլայ փաշայն, որ նստէր ի  
Վան, ել սարսափէր Ե[7] փաշայիւք ի վե-  
րայ Թարվիզոյ: Էառ զամենայն գաւառսն, և  
զքաղաքն ոչ կարաց առնուր, ձմերեաց անդ:  
Եւ ի հետակայ ամին, որ էր թվ. ՌՃՀԴ  
[1725 թ.] յուլիս ամսին պատեր(ա)զմեցաւ  
և բազում մարտիւ էառ զքաղաքն Թարվիզ:  
Եւ զոր ինչ հանդիպեցաւ Համադանայ,  
այսպէս և Թարվիզոյ ևս և ողորմելի և տա-  
ռապեալ աղգիս հայոց, որք անդ բնակէին:  
Եւ այսպէս աստուծասասա բարկութիւնն  
եւ ի վերայ ազգին պարսից և պատուհա-  
սեաց այրելով ընդ նմա և զազգս հայոց:

Մարս օսմանցոց բնդ աղվանս և բնդ  
պարսից<sup>1)</sup>: Ի սոյն թվ. և մայիս ամսին առին

<sup>1)</sup> 49ք երեսի վերեւ զբնիւ մայս վերնագիրը  
տեքստի համապատասխան տեղում մենք ենք դրել:



օսմանցիքն դժանջայ և ի սոյն թվ. առին [49ա] զԱրդաւէլ ամենայն դաւառօքն: Ի սոյն թիվս Միւր Մանուկն, որ Իսպահան ի խնւեացն ցնդեալ այսահարութեամբ մեռանիւ չօրեղբօր որդի նորա, Աշրաֆ սուլթան, ապրիլ Գ[3] նստաւ ի տեղի Մանուկին Իսպահան թախտ և յետ Օքայ անունն իւր: Եւ ի թվ. ՌՁԻՁ [1726 թ.] սեպտեմբեր ամսին Հայոց ՌՃՀԵ վերոյ Ահմադ փաշայն Բաղդադայ ել սարէսքէր Ը փաշայիւք իբր ճՌ [100,000] մարդօք ի վերայ Աշրաֆ սուլթանին: Եւ հասեալ մինչ ի Ասպահանայ, մերձ Գուրիէյքան, պատերազմեցաւ ընդ ադմանայ: Եւ պարտեաւ Ռր և կոտորեցան օսմանցիք իբր խՌ [40,000]: Եւ մնացեալքն ցիր և ցան փախստական դարձան: Ընդ որս և Ահմադ փաշայն, փոքր արամբք փախստական դարձաւ ամօթալի ի Բաղդադ: Եւ Աշրաֆ սուլթանն բազում քաջութեամբ և աւարօք օսմանցոցն դարձաւ Իսպահան: Դարձեալ ի յետալս ամին, որ էր թվ. փրկչին ՌՁԻԻ [1727 թ.] և հայոց ՌՃՀԶ, մայիս ամսոյն, ել հրաման թագաւորէն օսմանցոց ի վերայ Ահմադ փաշային՝ ելանել ի վերայ Ադմանին: Ռր և եկեալ բազում փաշայիւք և իբր թՃՌ (900,000) արամբք մերձ Իսպահանայ իբ-

րեւ ի[7] աւուր ճանապարհ բանակեցաւ Էջ և Աշրաֆ սուլթանն Իսպահանայ զօրօք իւրօք և բանակեցաւ մերձ օսմանցոց՝ իբրև աւուր միոյ ճանապարհ: Եւ բազում պատգամաբերք ելեկութեամբ արարին հաշտութիւն ընդ միմիանս: Դարձան օսմանցիք ի Բաղդադ և ադուանն Իսպահան: Իսկ ի թվ. 1729 և հայոց ՌՃՀԸ, թուրքման ոմն պարսիկ, անուն Նազար խան, որ անուանեցաւ Թահմազ դուլի խան, արի և քաջ պատեւադմոզ, ել Մաշադ քաղքէն բազում զօրօք ի վերայ ադման Աշրաֆ սուլթանին: Գ[3] անդամ պատերազմացաւ, երեք անգամ ևս պատերազմեալն պարտեցաւ Աշրաֆ սուլթանն և փախաւ: Ի ճանապարհին կտլան զնա զօրամարտն իւր ադմանք, տարան ի Ղանդահար: Եւ անդ գլխատեաց զնայ երկրորդ որդին Միւր Վէլին, որոյ անուն էր<sup>1)</sup> Եւ Թահմազ դուլի խանն բերեալ Մաշադայ շահ Թահմազն, որդի շահ սուլթան Հուսէյնին եւ թախտնստոյց Իսպահան [49բ] ի նոյնմբեղ ամսին: Ի սոյն ամի ել Թահմազ դուլի խանն զօրօք բազմօք և էառ Համազան, Քրմանշայ, Հաւիզայ, Ղուշտար և ի յայն կոյս երկրայս Պարսից ի ձեռաց Օսմանցոց:

<sup>1)</sup> Անժան տեղը մոտեւ է Ղզրված: